ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Անի Հունանյան, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստան, ք. Ալմաթի, 2024 թվականի փետրվարի 21-ից փետրվարի 23-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

«Ֆիսկալ ռիսկերի կառավարում» թեմայով աշխատաժողովին մասնակցության նպատակն էր Ֆիսկալ ռիսկերի կառավարման գործառույթի զարգացման նպատակով փորձի փոխանակումը, Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից վերջինիս ուղղությամբ լավագույն գործիքակազմի ներկայացումը և խորհրդատվության տրամադրումը: Աշխատաժողովի տարբեր քննարկումների և դասախոսությունների շրջանակներում ներկայացվեց ֆիսկալ ռիսկերի տեսակների, դրանց կառավարման մեխանիզմների, ռիսկերի բացահայտման մեթոդների, գնահատման գործիքակազմի և կառավարմանն ուղղված խնդիրների վերաբերյան համապարփակ տեղեկատվություն:

Հրավիրված էին Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի երկրների ներկայացուցիչներ, որոնք կիսվեցին ֆիսկալ ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման ոլորտներում իրենց փորձով:

Աշխատաժողովը հանդիսանում էր հարթակ գործընկերների հետ ֆիսկալ ռիսկերի կառավարման լավագույն փորձի փոխանակման համար՝ նպաստելով մասնակից երկրներում ֆիսկալ ռիսկերի կառավարման, ֆիսկալ կայունության և թափանցիկության բարելավմանը:

5. Քննարկված թեմաները՝

1. Ֆիսկալ ռիսկերի վրա ազդող մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումները:
2. Ֆիսկալ ռիսկերի կառավարման հայեցակարգը. երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ, միջազգային պրակտիկա:
3. Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարում. երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ, միջազգային պրակտիկա:

4. Պետություն-մասնավոր գործընկերությունից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարում. երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ, միջազգային պրակտիկա։
5. Գործիքակազմ՝ բացահայտելու, գնահատելու և վերլուծելու ֆիսկալ ռիսկերը։
6. Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած հնարավոր ֆիսկալ ռիսկերի կառավարում։
7. Գործնական առաջադրանքներ՝ միտված ֆիսկալ ռիսկերի գնահատմանը և առաջնահերթությունների բացահայտմանը՝ օգտագործելով ԱՄՀ-ի ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիքակազմը։
8. Ֆիսկալ թափանցիկություն և ֆիսկալ ռիսկերի բացահայտում, երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ։
9. Խմբային քննարկումներ՝ ֆիսկալ ռիսկերի կառավարման գործառույթը զարգացնելու հնարավորությունները բացահայտնելու նպատակով։

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի շրջանակներում նախատեսված դասախոսություններն ուղեկցվեցին քննարկումներով՝ հնարավորություն տալով պարզաբանելու նոր գործիքակազմերի առավելություններն ու կիրառման հնարավորությունները։ Աշխատաժողովի ընթացքում Հայաստանի ներկայացուցիչները ներկայացրեցին 2 շնորհանդես՝ կապված ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման շրջանակի և Պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման փորձի հետ։ Տարբեր քննարկումների, ինչպես նաև ամփոփիչ ելույթի շրջանակներում մանրամասն անդրադարձ կատարվեց Հայաստանում ֆիսկալ ռիսկերի գնահատման գործառույթին առնչվող մարտահրավերներին, հնարավորություններին և գործառույթի զարգացմանն ուղղված մեր տեսլականին։ ԱՄՀ ներկայացուցիչների հետ առանձնազրույցների շրջանակներում քննարկվեցին առանձին ուղղություններով ֆիսկալ ռիսկերի գնահատման գործառույթների զարգացման հնարավորությունները, ԱՄՀ նախատեսվող տեխնիկական աջակցության հիմնական խնդիրները և առանձնացվեցին աջակցության ենթակա կարևորագույն ուղղությունները։

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Քննարկումների և առանձնազրույցների շրջանակներում ձևավորվել են մի շարք երկկողմանի համագործակցության հնարավորություններ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ առանձին երկրների ներկայացուցիչների հետ՝ անհրաժեշտ ուղղություններով նյութերի, տեղեկատվության և փորձի փոխանակման, ինչպես նաև առաջիկայում տարբեր ձևաչափերով քննարկումների անցկացման նպատակով։

ԱՄՀ ներկայացուցիչների հետ գույքագրվել են Ֆիսկալ ռիսկերի կառավարման գործառույթին առնչվող կարիքները և նախաձեռնվել է գործիքակազմի կիրառման զարգացման ուղղությամբ որոշակի քայլերի իրականացում։

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի արդյունքների, պայմանավորվածությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է վարչության աշխատակիցներին, տրամադրվել են անհրաժեշտ նյութերը և նախաձեռնվել են՝ աշխատանքներ նոր գիտելիքների և փորձի տեղայնացմման ուղղություններով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Աննա Հովհաննիսյան

28 փետրվար, 2024թ.